

# Բացատրություն Սուրբ Պատարագի

## Զոհագործությունը Հին Կտակարանի մեջ:

Այս գրության նպատակն է հայ հաւատացեալին բացատրել Հայ Եկեղեցոյ Ս. Պատարագի խորհուրդն ու իմաստը Աստուածաշունչի հիմքերով:

Այս աշխատանքն ընթերցողը դիրութեամբ պիտի կարենայ հասկնալ Ս. Պատարագը իբրև գոհաբանական աղօթք, պաշտամունք, փառաբանություն և գոհագործություն, որուն մատուցման կարևորագոյն նպատակն է՝ Ս. արարողութեան մասնակցող հաւատացեալին հաղորդակից դարձնել Քրիստոսի մարմնին ու արեան և հոգևոր միութեան ուխտ վերահաստատել Արարիչ Աստուծոյ հետ:

–Ի՞նչ կը նշանակէ Պատարագ:

Պատարագ կը նշանակէ գոհ: Աստուծոյ առաջ խորան պատրաստելու և գոհ կամ ողջակէզ մատուցելու արարողությունը կը կոչուի պատարագ: Պատարագի գաղափարը մեզի կուգայ Հին Կտակարանէն, ուր Աստուծոյ առջև առաջին գոհը մատուցեցին Ադամի ու Եւայի որդիներ՝ Կայէնն ու Աբելը: (Ծննդոց 4:3-8)

Հին Կտակարանի մէջ գոհաբերութեան շատ դէպքերու և օրէնքներու կը հանդիպինք եթէ կարդանք Ծննդոց, Ելից, Ղևտացոց և ասոնց հետևող գիրքերը: Օրինակ, Ծննդոց գիրքին մէջ կը կարդանք Նոյի մատուցած գոհի մասին (8:20-22), երբ ան գոհասեղան շինեց և անպիղծ անասուններ ողջակիզեց գոհասեղանի վրայ և «Աստուած հոտոտեց անուշ բոյրը...»: Նոյն գիրքին մէջ կը կարդանք նաև Աբրահամի և Իսահակի մասին: Աստուած տեսաւ Աբրահամի անխախտ հաւատքը և երկինքէն հրեշտակը ըսաւ. «Աբրահամին, «... այժմ համոզուեցայ, որ դուն երկիւղ ունիս Աստուծոյ նկատմամբ և ինձի համար չես խնայէր քու որդիդ» (22:3-19):

Սուրբ Զատիկը, որ քրիստոնէայ աշխարհը կը տօնէ իբրև Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեան տօնը, Հին Կտակարանի աւանդութեան մէջ այն կը տօնուէր իբրև հրեայ ժողովուրդին Եգիպտոսէն դուրս գալու, գատուելու յիշատակի տօն: Ելից գիրքի 12-րդ գլխուն մէջ Աստուած Զատիկի յիշատակի տօնը հաստատելով պատուիրեց իսրայէլացիներուն, որ անոնք յաւիտեան տօնէին Զատիկը իբրև Տիրոջ տօն, գառնուկներ գոհեն և եօթը օր բաղարջ (անթթխմոր) հաց ուտեն: Տէրը Մովսէսին ըսաւ, «Առաջին ամսի տասնչորսերորդ օրուայ երեկոյեան Տիրոջ Զատիկն է: Նոյն ամսի տասնհինգերորդ օրը Տիրոջը նուիրուած Բաղարջակերաց տօնն է. եօթը օր բաղարջ հաց պիտի ուտէք» (Ղևտացոց 23:5-6):

Իրապէս, հրեաներ Աստուծոյ կողմէ Մովսէսին տրուած գոհի կամ ողջակիզումի օրէնքներուն խստութեամբ հետևեցան ու իրենց կրօնական կեանքի ամենահիմնական աղբիւրը դարձուցին իրաքանչիւր օրէնք և պատուիրան: Կարևորագոյն օրէնքը բոլոր օրէնքներուն մէջ հանդիսացաւ մեղքերու քաւութեան օրէնքը: Ղևտացոց գիրքին 16-րդ գլխուն մէջ մեղքերու քաւութեան մասին կը կարդանք յատուկ յանձնարարութիւն՝ Տիրոջ կողմէ տրուած Մովսէսին. այստեղ կը յիշուի նաև լուսցման կարևորութիւնը ողջակէզը նուիրաբերելէ առաջ և յետոյ (Ղևտ. 16:23-28): Մեղքերու քաւութեան բոլոր տեսակի գոհերը պէտք է մատուցուէին կարծր փայտէ, հողաշէն կամ քարաշէն խորաններուն վրայ, որոնց մասին դարձեալ Տէրը պատգամեց Մովսէսին (Ելից 20:22-25, 27:1): Հին Կտակարանի գիրքերէն կը ծանօթանանք, որ Կայէնի ու Աբելի մատուցած գոհերէն մինչև Քրիստոսի ժամանակները, հրեաներուն մատուցած բոլոր գոհերը, ներառեալ գատկական ընծաները, ընտրուեցան անարատ անասուններէն և ողջակիզուեցան գոհասեղաններուն վրայ (Ղևտացոց գլ. 1, 3, 4, 5):

Ս. Պատարագի արարողութեան վերջաւորութեան, պատարագիչ հոգևորականը Ս. խորանէն դաս իջնելէ յետոյ կ'արտասանէ հետևեալ աղօթքը, «Օրէնքներուն և մարգարէներուն կատարումը դուն ես Քրիստոս Աստուած մեր Փրկիչը, որ կատարեցիր քու հայրական բոլոր տնօրինութիւններդ: Մեզի ևս լեցուր քու Սուրբ Հոգիովդ»: Եսայի և Չաքարիա մարգարէները իրենց օրերուն գուշակեցին Էմմանուէլի, չարչարուող Ծառայի և «փրկագոծ ու խոնարի թագաւորի» գալուստը, որ ի լրումն ժամանակի պիտի կատարուէր Աստուծոյ տնօրինութեան համաձայն (Եսայի 7:14, 52:13, 53:2-5. Չաքարիա 9:9-10): Միաձին Որդին պիտի ծնուէր Սուրբ Կոյսէն ու Իր անձը պիտի պատարագէր խաչին վրայ մարդկութեանը մեղքերէ քաւելու, փրկագործելու և Ս. Հոգիով մխիթարելու համար:

Հին Ուխտի պատմութեան ընթացքին պատրաստուած բոլոր գոհասեղաններուն սրբագոյնը հանդիսացաւ Գողգոթայի Խաչը, իսկ մատուցուած բոլոր ողջակէզներուն գերագոյնն ու կատարեալը եղաւ նոյնինքն Քրիստոս Փրկիչը: Հին Կտակարանի գոհերը, որ Աստուծոյ առաջ ողջակիզումի պատրաստուեցան, մարդոց կողմէ ընտրուեցան նուիրելու համար Տիրոջը: Սակայն Նոր Կտակարանի գոհը ընտրուեցաւ ու ողջակիզուեցաւ Աստուծոյ կողմէ իբրեւ փրկագործութեան պատարագ՝ համայն մեղաւոր մարդկութեանը մեղքերէ քաւելու համար: Քրիստոս դարձաւ յաւիտենական Փրկիչը եւ աշխարհի Լոյսը (Յովհ. 8:12), լուսաւորելու և աստուածային անսահման սիրոյ, խաղաղութեան և ողորմածութեան կնիքը դրոշմելու համար մեղաւոր մարդկանց հոգիներուն վրայ:

*Տ. Վարդան Բենյ. Չուլֆայեան*